## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ E-mail: ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 սեպտեմբերի 2022 թվականի N 185-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆԳԱՌԻ ՎԱՅՐԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ***որոշում եմ***.

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տարածքում զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար հատուկ կայանման և կանգառի վայրեր՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2022 թվականի սեպտեմբերի 27
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի
2022 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 185-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԿԱՅԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՆԳԱՌԻ ՎԱՅՐԵՐ

| Հ/Հ | Բնակավայրի անվանումը | Բնակավայրի հասցե |
|---|---|---|
| 1 | Աշոցք | Ղազանչիի խճ., թիվ13, «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի հարակից տարածք |
| 2 | Սարագյուղ | Հայաստանյանց Առաքելական Սուրբ եկեղեցու հարևանությամբ |
| 3 | Բավրա | Գյումրի-Նինոծմինդա, թիվ 13, վարչական շենքի հարակից տարածք |
| 4 | Թավշուտ | 1փ., 2անց., թիվ1, վարչական շենքի հարակից տարածք |
| 5 | Սիզավետ | 3փ., թիվ 5,, վարչական շենքի հարակից տարածք |
| 6 | Ղազանչի | Ղազանչիի մշակույթի տան հարևանությամբ |
| 7 | Մեծ Սեպասար | Մեծ Սեպասարի մշակույթի տան հարևանությամբ |
| 8 | Փոքր Սեպասար | «Փոքր Սեպասար տարրական դպրոց» ՊՈԱԿ –ի շենքի հարակից տարածք |
| 9 | Կրասար | Կրասարի հին դպրոցի շենքի հարակից տարածք |
| 10 | Ջույգաղբյուր | Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանի հարակից տարածք |
| 11 | Կարմրավան | «Կարմրավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի շենքի հարակից տարածք |
| 12 | Վարդաղբյուր | Կանգառի հարակից տարածք |
| 13 | Ցողամարգ | <<2-րդ աշխարհամարտում զոհվածների>> հուշարձանի հարակից տարածք |
| 14 | Թորոսգյուղ | Կանգառի հարակից տարածք |
| 15 | Լեռնագյուղ | <<Սուրբ Հովհաննես>> եկեղեցու հարակից տարածք |
| 16 | Գոգհովիտ | Մշակույթի տան հարակից տարածք |
| 17 | Արփենի | Վարչական շենքի հարակից տարածք |
| 18 | Հարթաշեն | <<Լույս աղբյուր>>հուշարձանի հարակից տարածք |
| 19 | Մուսայելյան | <<Լույս աղբյուր>>հուշարձանի հարակից տարածք |
| 20 | Սալուտ | Վարչական շենքի հարակից տարածք |
| 21 | Բաշգյուղ | <<2-րդ աշխարհամարտում զոհվածների>> հուշարձանի հարակից տարածք |
| 22 | Փոքր Սարիար | <<2-րդ աշխարհամարտում զոհվածների>> հուշարձանի հարակից տարածք |

| | | |
|---|---|---|
| 23 | Կաքավասար | Դպրոցի հարակից տարածք |
| 24 | Սարապատ | Գյուղի մուտքի կամրջի հարակից տարածք |
| 25 | Ձորաշեն | <<Գետիկի>> ջրամբարի հարակից տարածք |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ**
**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ E-mail: ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 սեպտեմբերի 2022 թվականի N 186-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ (ԲՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ) ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, **որոշում եմ**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի զբոսաշրջային ռեսուրսների գույքագրման (բնական, պատմամշակույթային, մարդկային) գրանցամատյանի ձևանմուշը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի զբոսաշրջային ռեսուրսների գույքագրման գրանցամատյանը վարելու գործառույթները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ Աշոտ Հովհաննիսյանին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈՂԱՐԻՆՈՂ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2022 թվականի սեպտեմբերի 27
գյուղ Աշոցք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 186-Ա ՈՐՈՇՄԱՆ

# Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ (ԲՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ)

Սկսված է <<——>> —————————— 202 թ.

Համայնքի ղեկավար —————— ——————————
(ստորագրություն) (անվան սկզբնատառերը և ազգանունը)

Կ.Տ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք գ. Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հոկտեմբերի 2022 թվականի N 189 - Ա

### ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԵՈՐԳԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ, ԿԱՐԼԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ, ՔՐԻՍՏԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՆԱՀԻՏ ՄԽԵՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-085-016-014-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի հոկտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած Գեորգի Բաղդասարյանի դիմումը, **որոշում եմ.**

Քաղաքացիներ Գեորգի Բաղդասարյանին, Կարլեն Բաղդասարյանին, Քրիստինե Բաղդասարյանին և Անահիտ Մխեյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, Սարապատ համայնք, գյուղ Մուսայելյան, 1-ին փողոց, 1-ին անցուղի, 1-ին փակուղի բնակելի տուն 5, հասցեում գտնվող, 08-085-016-014-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2003 թվականի սեպտեմբերի 12-ին, վկայական N 1229855/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Մուսայելյան, 1-ին փողոց, 1-ին անցուղի, 1-ին փակուղի, բնակելի տուն 5:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 3
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1.
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հոկտեմբերի 2022 թվականի N 190 - Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԵՈՐԳԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ, ԿԱՌԼԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՔՐԻՍՏԻՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-085-014-015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի հոկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած Գեորգի Բաղդասարյանի դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Գեորգի Բաղդասարյանին, Կառլեն Բաղդասարյանին և Քրիստինա Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, Սարապատ համայնք, գյուղ Մուսայելյան, 1-ին փողոց, 4-րդ անցուղի, հողամաս 8, հասցեում գտնվող, 08-085-014-015 կադաստրային ծածկագրով հողամասին /գրանցված՝ 2003 թվականի սեպտեմբերի 12-ին, վկայական N 1664511/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Մուսայելյան, 1-ին փողոց, 4-րդ անցուղի, հողամաս 8:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 4
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հեկտեմբերի 2022 թվականի N 191 - Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՍՈՆ ՍԵՐՈԲԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-0044-0001-005- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի հոկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած Սամսոն Մկրտչյանի դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացի Սամսոն Սերոբի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետութուն, Շիրակի մարզ, գյուղ Աշոցք, 1-ին փողոց, 2-րդ անցուղի, շենք 3, բնակարան 38, հասցեում գտնվող, 08-015-0044-0001-005- կադաստրային ծածկագրով /ըստ օրենքի ժառանգության իրավունքով գրանցման թիվ 100/2022 վկայագիր/ բնակարանին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք գյուղ Աշոցք, 1-ին փողոց, 2-րդ անցուղի, շենք 3, բնակարան 38:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 5
գյուղ Աշոցք